ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԱՎԱԶԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Հաշվետվությունը ընդգրկվում է 06.02.2011թ. մինչև 30.12.2011թ. ժամանակահատվածը:

2011թ. ժամանակաշրջանում Ավազան գյուղական համայնքի սոցիալ տնտեսական վիճակը բարելավելու համար ինչպես համայնքի սեփական եկամուտների միջոցներով, այնպես էլ դոնոր կազմակերպությունների օգնությամբ համայնքում իրագործվել են մի շարք ծրագրեր:

ՀՀ կառավարության կողմից տրամադրվել է գարնանացան գարի 7000 կգ., աշնանացան ցորեն առաջին վերարտադրության 6500 կգ., էլիտար ցորեն 11100 կգ.:

«Գարդման Գյուղատնտեսական Ասոցիացիա» ս/կ. և Վորլդ Վիժն կազմակերպության ֆինանսավորման միջոցով, ՀՀ կառավարության շնորհիվ ձեռք է բերվել ՄՏԶ-82/1 տրակտոր, խոտ մամլիչ, գութան և խոտ հնձիչ:

Վորլդ Վիժն կազմակերպության հովանավորչության միջոցով և «Գարդման Գյուղատնտեսական Ասոցիացիա» ս/կ-ի կողմից համայնքում ընթացքի մեջ է մրգերի սառնարանի շինարարությունը, որը նախատեսված է պահեստավորել մինչև 20 տոննա միրգ:

Շեն կազմակերպության և Օրանժ Արմենիայի հովանավորությամբ կատարվել է գյուղապետարանի ցանկապատում, կանաչապատում, գրադարանի և ակումբի կահավորումը:

Համայնքի շուրջ 64 երեխաներ ընդգրկված են Վորլդ Վիժն կազմակերպության հովանավորչության տակ:

Համայնքի դպրոցի աշակերտների դասագրքերի և ձևատետրերի 2011-2012 ուտարվա վարձավճարները կազմում են 228.2 հազար դրամ, որի վարձավճարների մի մասը վճարում է գյուղապետարանը, իսկ մյուս մասը վճարում է «Գարդման Գյուղատնտեսական Ասոցիացիա» ս/կ-ը:

«Սէյվ Դը Չիլդրեն» և «Մարտունու կանանց համայնքային խորհուրդ» կազմակերպությունների աջակցությամբ ամբողջովին վերանորոգվել է համայնքի բուժ կետը:

Համայնքի հիմնական խնդիրներից կայանում են նոր խմելու ջրագծի կառուցումը, քանի որ համայնքում խմելու ջուրը չի բավարարում ազգաբնակչությանը:

2011թ. համայնքի տարեկան բյուջեի եկամտային մասը կազմում է՝ 5794.5 հազար դրամ, որից սեփական եկամուտը կազմում է՝ 1994.5 հազար դրամ: Համայնքի բյուջեն կատարվել է՝ 96% -ով, կամ գումարային արտահայտությամբ 5572.0 հազար դրամ:

Հողի հարկի գծով պլանային մասը կազմում է՝ 1011.0 հազար դրամ, որից գանձվել է 787.9 հազար դրամ, որը կազմում է՝ 78.0%:

Հողի վարձավճարի պլանը կազմում է 894.7 հազար դրամ, որից գանձվել է 895.0 հազար դրամ, որը կազմում է՝ 100%:

Գույքահարկի պլանը կազմում է՝ 68.8 հազար դրամ, որից գանձվել է 69.1 հազար դրամ, որը կազմում է՝ 100%:
Տեղական տուրքի պլանը կազմում է՝ 20.0 հազար դրամ, որից գանձվել է 20.0 հազար դրամ, որը կազմում է՝ 100%:
Համահարթեցման դոտացիաի կազմում է 3500.0 հազար դրամ, որը հատկացվել է 100%:
Պատվիրած լիազորություն (անասնաբույժի աշխատ.) 300.0 հազար դրամ, որը հատկացվել է 100%:

Համայնքի տարեկան բյուջեի ծախսային մասը կազմում է՝ 5984.5 հազար դրամ, որից փաստացի ծախսվել է՝ 5768.9 հազար դրամ:

Ընթացիկ աշխատավարձը կազմում է՝ 2851.2 հազար դրամ, որից վճարվել է 2851.2 հազար դարամ:
Ընթացիկ սոց. վճարը կազմում է՝ 620.0 հազար դրամ, որից վճարվել է 620.0 հազար դարամ:
Բյուջեում նախատեսված նախորդ տարիների աշխատավարձը կազմում է՝ 1329.6 հազար դրամ, որից վճարվել է 1329.6 հազար դարամ:
Բյուջեում նախատեսված նախորդ տարիների սոց. վճարը կազմում է՝ 160.0 հազար դրամ, որից վճարվել է 140.1 հազար դարամ:
Էներգետիկ ծառայությունների պլանը կազմում է՝ 60.0 հազար դրամ, որից փաստացի ծախսվել է՝ 50.0 հազար դրամ:
Ներքին գործուղումների պլանը կազմում է՝ 120.0 հազար դրամ, որից վճարվել է՝ 120.0 հազար դրամ:
Գրասենյակային նյութերի պլանը կազմում է՝ 40.0 հազար դրամ, որից փաստացի ծախսվել է՝ 40.0 հազար դրամ:
Տեղեկատվական ծառայությունների պլանը կազմում է՝ 25.0 հազար դրամ, որից փաստացի ծախսվել է՝ 0.0 հազար դրամ:
Այլ հարկերի պլանը կազմում է՝ 30.0 հազար դրամ, որից փաստացի ծախսվել է՝ 17.0 հազար դրամ:
Այլ նպաստների (դպրոցի դասագրքերի վարձավճար) պլանը կազմում է՝ 148.7 հազար դրամ, որից փաստացի ծախսվել է՝ 101.0 հազար դրամ:
Կապիտալ վերանորոգման պլանը կազմում է՝ 100.0 հազար դրամ, որից փաստացի ծախսվել է՝ 0.0 հազար դրամ:
Պահուստային ֆոնդի պլանը կազմում է՝ 200.0 հազար դրամ, որից փաստացի ծախսվել է՝ 200.0 հազար դրամ:
Պատվիրած լիազորությունների (անասնաբույժի աշխատ.) պլանը կազմում է՝ 300.0 հազար դրամ, որից փաստացի ծախսվել է՝ 300.0 հազար դրամ:
Համայնքի աշխատակազմը խնդիր է դրել կատարել իր ստանձնած պարտավորությունները: Համայնքապետարանը փնտրում և փորցում է գտնել դոնոր կազմակերպություններ՝ համայնքում նոր խմելու ջրագիծ կառուցելու համար, որի անհրաժեշտությունը առաջնահերթ խնդիր է դարձել գյուղի բնակիչների համար:
Ավազան համայնքի աշխատակազմը, կօգտագործի իր մտավոր կարողությունները համայնքի բնակիչների սոցիալ տնտեսական վիճակը բարելավելու համար:

Ավազան գյուղական համայնքի ղեկավար՝ Ա. Դալլաքյան